Ռ. Ա. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՈՐԴԵԾՆՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻՆ ՈՒ ԾԵՍԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ-XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

(ԸՍՏ ԱՂՁՆԻՔԱՀԱՅԵՐԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ)

Աղձնիքում, ինչպես և ողջ Հայկական լեռնաշխարհում սերնդի շարունակության ապահովումը եղել է հայ ընտանիքի մտահոգության առարկան, ուստի առանձնահատուկ հոգածություն էր ցուցաբերվում նորընծա ամուսնական զույգի նկատմամբ: Այն ցայտուն արտահայտվում էր հարսանեկան սովորույթներում ու ծեսերում[1]: Սակայն, եթե հարսանեկան սովորույթների մեջ արտացոլվում էր պտղաբերության պաշտամունքի սոսկ գաղափարը՝ նորապսակների արգասավորությունը, դրանով իսկ սերնդի շարունակումն ապահովելու ժողովրդական նախնական միջոցառումները, ապա նոր ընտանիքի ձևավորումից հետո մարդիկ սպասում էին, թե ինչ արդյունք են տվել իրենց իրական և մոգական գործողությունները:

Հարսանեկան և ետհարսանեկան ծիսական համալիրում որդեծնության հետ կապված մեր գրի առած դաշտային ազգագրական նյութերը կարելի է բաժանել 4 խմբի. 1) ծեսեր և սովորույթներ ամուսինների որդեծնությունն ապահովելու համար, 2) ամլությունից խուսափելու համար ձեռնարկվող ծեսեր և սովորույթներ, ամլությունը բուժելու ժողովրդական հնարներ, 3) հղի կնոջ վարքագիծը կարգավորող ծեսեր ու սովորույթներ, 4) որդեծնության (մանկան ծննդի) հետ կապված սովորույթներ և ծեսեր: Այս համալիրի ծեսերի ու սովորույթների առանձնահատկությունն այն է, որ հիմնականում կրոնամոգական բնույթի են և սերում են ամենահին ժամանակներից: Միսական այդ ամբողջ շարքը նպատակ ուներ նմանողական մոգական գործողություններով ապահովել նորաստեղծ ընտանիքում մանկան ծնունդը:

Կնոջ անգնահատելի արժանիքն էր համարվում որդեծնությունը, որի հետ է կապվում հայ ընտանիքի բարեհաջողությունը: Ահա թե ինչու առագաստից սկսած քառասուն օր նորահարսը որևէ ծննդկանի տուն չէր մտնի, որպեսզի ալքերին չհանդիպեր և իր պտղաբերությանը վտանգ չհասցներ:

Աղձնիքահայերի ետհարսանեկան ծիսական համալիրում առավել հարուստ է ծեսերի ու սովորույթների այն շարքը, որն ուղեկցում է ամուլ կնոջն ու նրան առնչվող հավատալիքներին: Երբ զույգը կանգնում էր ամլության փաստի առաջ, սկսվում էր կախարդական միջոցառումների շրջանը: Այն դիտվում էր որպես ի վերուստ տրված պատիժ: Աղձնիքում

---

[1] **Ռ. Նահապետյան**, Ժողովրդական հավատալիքների համակարգը հայոց ընտանեկան ծիսակատարություններում (ըստ աղձնիքահայերի մոտ պահպանված սովորույթների), ՀՍՍՀ, ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագիր, 1984, N 4, էջ 54-61:

սերունդ չունեցողների մասին ասել են, թե «մարդ չէ», «մարդություն չունի», այսինքն՝ սերնդագործելու ընդունակ չէ[2]: Աղձնիքում հանդիպած երկկնության դեպքերը հենց ամլության փաստով են հիմնականում պայմանավորված եղել, այլ ոչ թե բազմակնության հետևանք են: Այս է պատճառը, որ ամուլ կանայք ոչ միայն զավակ ունենալու ցանկությամբ, այլև հասարակական պարտավանքից ազատվելու նպատակով դիմում էին հնարավոր իրական և մոգական հնարների:

Դարերի ընթացքում ժողովուրդը մշակել է ամլության դեմ պայքարելու բազմաթիվ ու բազմապիսի իրական (ռացիոնալ) և անիրական (իռացիոնալ) հնարներ, որոնցում դրսևորվում են մի կողմից՝ ժողովրդական բժշկության դարավոր փորձն ու հմտությունները, մյուս կողմից՝ ժողովրդական հավատալիքներն ու պատկերացումները: Ամլության բուժման հնարները երբեմն պսակվում էին հաջողությամբ, և նորաստեղծ ընտանիքը երջանկանում էր: Սակայն լինում էին նաև դեպքեր, երբ ամլությունը մնում էր անբուժելի, որի դեպքում դիմում էին կախարդական միջամտությունների:

Ամլության իրական պատճառներից մեկը համարվում էր վաղ ամուսնությունը, որի հետևանքով երաշխավորվում էր մինչև 7 տարի զավակի սպասելու ժամկետ: Իրական պատճառներից էին նաև ամուսնու՝ բնակավայրից դուրս երկարատև աշխատանքի մեկնելու հետևանքով երիտասարդ ամուսինների ոչ բնականոն հարաբերությունները, պատուհասած հիվանդությունները, ծանր ֆիզիկական աշխատանքը և այլն:

Ամլությունն ամենամեծ պատուհասն է համարվել հայ կնոջ համար: Զբեր կնոջը համեմատելով անպտուղ ծառի հետ, հաճախ անվանել են «չոր կոճ»[3]: Հասարակության մեջ կարեկցանքի էր արժանանում ամուսինը, որին համարում էին Աստծո կողմից պատժված և խուսափում նրան կնունքի կամ հարսանյաց քավոր ընտրել: Դրան հակառակ, որքան աճում էր զավակների թիվը, այնքան կինը կշիռ և իրավասություն էր ստանում ընտանիքում և հասարակության մեջ: «Ես տասը տղամարդի մայր եմ»,- լսվում էր շատ անգամ նրանից: Ուստի կնոջ անգնահատելի արժանիքը համարվել է արգասավորությունը, որի ապահովումը եղել է ոչ միայն ընտանիքի, այլև ամբողջ հասարակության գործը: Երեխա ունենալու բնատուր ընդունակությունը չկորցնելու մտահոգությամբ նորահարսին արգելվում էր կատարել ծանր աշխատանք: Սերնդաճը չէր կանխվում, իսկ վիժումը, որին *անցուցք* էին անվանում, դիտվում էր իբրև *հոգի կորցնել* կամ հոգու նկատմամբ մեղք գործել: Ահա թե ինչու վիժող կինը պարտավոր էր հոգուն հետագա տեղ ունենալու համար *ժամ ու պատարագ անել, ուխտի գնալ* և զոհ մատուցել[4]: Անզավակության դառնությունը տվյալ ընտանիքի հետ երկուստեք բաժանել են ինչպես ազգատոհմերը, այնպես էլ ողջ համայնքը:

Ամբողջապես լեռնական ավարառու և վայրենաբարո այլակրոն ցեղերով շրջապատված լինելու պայմաններում հայոց սերնդաճը դիտվում էր ոչ միայն որպես տնտեսության մեջ աշխատող ձեռք ունենալու, այլև ազգային ինքնապաշտպանությունը վաղվա զինվորներով ու մայրերով համալրելու, լայն առումով՝ ազգի գոյատևումն ապահովելու միջոց: Ըստ այդմ՝ դեռ միջին դարերում հայ ժողովուրդը և նրա ազգային Եկեղեցին, ամլությունն

---

[2] **Վ. Պետրոյան,** Սասնա ազգագրությունը, Երևան, 1965, էջ 272:

[3] **Ռ. Նահապետյան**, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), գ. 1, էջ 86:

[4] ԴԱՆ, գ. 2, էջ 116:

անդարմանելի պատուհաս համարելով, դրա հետևանքները մեղմելու հնարավոր ելքեր են փնտրել:

Մխիթար Գոշն (XIII դ.) իր «Դատաստանագրքում» հատուկ գլուխ է հատկացրել ամլության հարցերի քննությանը՝ «Յաղագս դատաստանաց ամլոց արանց և կանանց» խորագրով, ուր ասվում է, թե կնոջ ամլությունը Արարչի գործն է, ուստի նրան չպետք է արձակել, այլ բուժել: Եթե տղամարդը հանուն ժառանգի ցանկանում էր երկրորդ կին ունենալ, ապա բացառվում էր առաջին և երկրորդ կնոջ մի հարկի տակ ապրելը: «Նոյնպէս թէ առն իցէ անծնունդ լինել, արասցէ»[5], այսինքն՝ նույնպես կարվի, եթե տղամարդն անծնունդ լինի: XIX դ. վերջին – XX դ. սկզբին հարևանությամբ ապրող քրդերի և թուրքերի անմիջական ազդեցությամբ որոշ սասունցիներ առաջին կնոջ ամլության պատճառով և զավակ ունենալու ձգտումով երկրորդ կին էին ունենում: 1894-96 թթ. և 1904 թ. զանգվածային կոտորածների ու պարբերաբար կրկնվող ջարդերի հետևանքով նվազում էր հայ բնակչությունը, առավել չափով՝ հայ զինական ուժը:

Հայ Եկեղեցին, համայնքը և ընտանիքը ձգտել են որքան կարելի է կայուն պահել ընտանեկան հարաբերությունները, անաղարտ պահել բարոյական նորմերը: Աղձնիքում ապահարզան երբեք չէր թույլատրվում անգամ կնոջ կամ տղամարդու չբերության դեպքում: Ամուսնալուծությունը օրինական կարող էր համարվել, եթե կողմերից մեկը տառապում էր հոգեկան հիվանդությամբ, մաշկային ախտերով, եթե կողմերից մեկը կրոնափոխ էր եղել, եթե տղամարդը յոթ տարուց ավելի գտնվել էր պանդխտության մեջ, եթե կինը անբարոյական էր, եթե ամուսինը սեռապես անզոր էր:

Ամուսինների արգասաբեր կամ ամուլ լինելն Աղձնիքում երբեմն իմացվում էր ամուսնությունից մի քանի տարի անց միայն, քանզի աղջիկներին հաճախ ամուսնացնում էին տակավին արբունքի չհասած: Եվ գուցե պատճառներից մեկն էլ այն էր, որ նորակազմ ընտանիքի ամլությունը սովոր էին բացատրել, հիմնականում, որպես կնոջ արատ և միայն ծայրահեղ դեպքերում էին այն վերագրում ամուսնուն[6]:

Չբերությունը դիտվել է նաև որպես չար ոգիների ազդեցության արդյունք, որը բնորոշ էր նաև ուրիշ ժողովուրդների կրոնական մտածողությանը[7]: Կնոջն անզավակության մատնելու գործում զգալի դեր էր խաղում այն երևակայական ճիվաղը, որը պատմական Հայաստանի մեծագույն մասում հայտնի է եղել *թպղի* անվամբ[8]: Միջին դարերի ձեռագրերի մեջ թպղին պատկերվել է այծակերպ-մարդակերպ ճիվաղային կերպարանքով: Աղձնիքի Սասուն գավառում թպղին ենթադրվել է որպես կարմիր մրջյունի նման արարած,

---

[5] **Մխիթար Գոշ**, Գիրք Դատաստանի, էջ 40:

[6] ԴԱՌ, գ. 1, էջ 85-86:

[7] **Г. П. Сисарев**, Реликты домусульманских верований и обрядов у узбеков Хорезма, М. 1969, ёз 81; **Э. Г. Гафферберг**, Пережитки религиозных представлений у белуджей ("Домусульманские верования и обряды в Средней Азии, М., 1975, с. 230); **О. А. Сухарева**, Пережитки демонологии и шаманства у равнинных таджиков (նույն տեղում, էջ 15):

[8] Աղձնիքի հարևան Վասպուրական նահանգում այդ չար ոգին հայտնի է եղել *թրպղի* ձևով, որը երևակայվել է որպես գորտանման բազմոտանի արարած (**Եր. Լալայան**, Վասպուրական, գ. XXV, N 2, Թիֆլիս, 1913 էջ 59): Թպղի ճիվաղն այլ գավառներում այլ կերպ է կոչվել, օր., Ակնում՝ *քևպկ* («Բիւրակն», 1898, էջ 770-771), Զեյթում՝ *պրպղ* («Բիւրակն», 1898, էջ 557):

որը, իբր մտնելով կնոջ մեջքի մաշկի տակ[9], կարող էր թափանցել նրա արգանդը և թունավորել պտուղը: Ուստի երեխան կա՛մ մեռած էր ծնվում, կա՛մ մեռնում էր ծնվելուց շաբաթներ, ամիսներ, նույնիսկ մի քանի տարի անց: Այս ոգու չարամիտ ներգործությունը դիտվում էր իբրև յուրատեսակ հիվանդություն՝ *թպղոտություն* անվամբ: Մինչդեռ բժշկությունն այսօր այդ երևույթը կապում է վեներական ախտերի հետ:

Աղձնիքահայերի մեջ տարածված էր այն հավատը, թե կինը թպղոտություն էր ստանում, եթե նրա նկատմամբ թպղաուլինքով, որն իբր երկնքից կարկտի հետ ընկած կապտավուն քար էր, կախարդական գործողություն էր արվում: Իբր ծննդկանի կամ հղի կնոջ հանդեպ թշնամաբար տրամադրված կանայք այցելում էին նրանց՝ թպղաուլունքը գրպանում և գաղտնաբար տրորելով կամ սեղմելով այն, ծննդկանին դարձնում էին թպղոտ, իսկ նորածնին՝ մահացու հիվանդ[10]:

Թպղոտ կնոջը բուժելու հիմնական միջոցներից էր օձի բերանից ազատված կամ ջրից բռնած գորտը սպանելու և չորացնելու միջոցով հմայիլ (պահպանակ) պատրաստելն ու կնոջ որովայնի վրա կապելը: Կամ՝ եթե տեսնեին օձին գորտը բերանին, անմիջապես տալիս էին թպղոտ կնոջ անունը, որով իբր հիվանդը բժշկվում էր: Գորտն իր «զորությամբ» իբր թե վանում էր թպղոտությունը և ծնվածներին մնացական դարձնում: Հայկական դիցաբանության մեջ ամուլներին զավակ պարգևելը, հղիներին և մանուկներին պաշտպանելը, ալքերից մորը պաշտպանելը և այլն, կապվում էին գորտի հետ: Խոնավության բնակիչ գորտի մեջ, հավատալիքների համաձայն, ապրում էր հավերժահարսը: «Տանտերը» իբր թե գորտի, կրիայի, կատվի և առավելապես օձի կերպարանք ուներ և գիշերները՝ հավերժահարսի վերածված, «տան մութ տեղերը կտեսնվեր կիներու և երբեմն ալ կույս աղջիկներու»[11]:

Որդեզուրկ կանայք մինչև XX դարը գորտի մարմինը աղոթքով հմայիլ էին դարձնում և կախում պարանոցներից, որ վնասազերծվեին, զավակը հաջող ծնվեր և երկարակյաց լիներ: Առանձնապես հարգի էր օձի բերանից խլված գորտը, որը հղի կանայք կապում էին որովայնին[12]: Ուստի և՛ Վասպուրականում, Աղձնիքում, և՛ այլուր կանանց գոտիների արծաթե ճարմանդները ոսկերիչները սարքում էին գորտի պատկերով:

Թպղոտությունը «բուժում» էին նաև հիվանդին երեք անգամ հղի անասունի՝ կովի, շան, կատվի վրայով թոցնելով, գործողություն, որով իբր ցավը փոխանցվում էր այդ կենդանիներին: Դիմում էին նաև իրական գործողությունների. միայն յոթ աղջիկ երեխա ունեցող մոր կրծքի կաթով մերսում էին հիվանդի թիակներն այնքան, մինչև որ մաշկը կարմրեր, մաշկի տակից դուրս գային թպղին ներկայացնող կարմիր մրջյունատիպ մունիչներ, որից հետո *դեղրարը* (ժողովրդական բժիշկը) դանակի սուր շեղբով մաքրում էր այն: Թպղոտությունը կանխելու և նորածնին մնացական դարձնելու միտումով հաճախ տերտերի արած «գիր ու թուղթը» («ֆել ու ֆանդը») դնում էին կավե հողով լցված ամանի մեջ, որի

---

[9] ԴԱՆ, գ. 1, էջ 104-106, գ. 2, էջ 127:

[10] **Ղ. Ալիշան,** Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 221:

[11] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, էջ 63:

[12] Տե՛ս **Վ. Բդոյան**, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Եր., 1972, էջ 476, 496:

վրա էլ ծննդաբերում էր կինը[13]:

Կնոջ հղիության միջոցը դիտվում էր չափազանց կարևոր, բայց և վտանգաշատ փուլ տղաբերքի ու մանկատածության սովորույթների համակարգում: Ոչ մի կին չէր կարող զերծ համարվել վիժելու վտանգից ու դրա անցանկալի հետևանքներից: Քիչ չէին նաև դեպքերը, երբ երեխան ծնվում էր մահացած: Ուստի և ընտանիքը մեծապես մտահոգված էր սերնդի շարունակման արգանդային շրջանն անվտանգ ու ապահով անցկացնելու խնդրում: Այս ուղղությամբ կիրառվող հիգիենիկ ձեռնարկումներին զուգակցում էին զանազան կախարդական-հմայական գործողություններ: Այն ամբողջ ժամանակաշրջանը, որ ներառում էր կնոջ հղիությունը, բուն ծննդաբերության գործընթացն ու դրան հետևող ավանդական «քառասունքը», ուղեկցվում էր բազմատեսակ սնոտի արարողություններով, նախապաշարմունքներով ու կրոնական արգելքներով, զանազան պաշտամունքային բնույթի հնարներով, որոնք հետապնդում էին մի հիմնական նպատակ՝ ամեն կերպ պահպանել հղի կնոջ, ծննդկանի ու նորածնի առողջությունը:

Այսպես, չար ուժերի ազդեցությունից զերծ պահելու համար հղի կնոջն արգելվում էր անցնել ջրի վրայով, մտնել ձիանոց, որովհետև դրանք համարվում էին չարքերի մշտական բնակատեղիներ: Հղի կանայք խուսափում էին չբեր կանանց և «չարաչք» մարդկանց հանդիպելուց[14]: Հղի հարս ունեցող ընտանիքներում արգելվում էր հավը թուխս դնել՝ հավատալով, որ նման դեպքում կա՛մ ծնվելիք երեխան, կա՛մ ճտերը չէին ապրի[15]: Բոլոր հղի կանայք կրում էին պահպանակներ[16]: Բաղեշում, Սասունում չբեր կանայք վզներից մետաղե խաչեր էին կախում, որպեսզի «պաշտպանվեին» չարքերից ու երեխա ունենային: Այս խաչերը ժամանակավորապես վերցվում էին եկեղեցուց կամ այնպիսի տներից, որտեղ «սուրբ» կար: Այս նպատակով օգտագործվող խաչերի մի ժողովածու է պահվում Հայաստանի պատմության պետական թանգարանի ազգագրության բաժնում: Դրանք թանգարան են հանձնվել սասունցիների և ալաշկերտցիների կողմից[17]: Պահպանակի մի տեսակը պողպատից շինված ապարանջանն էր, որը ***Մառգարդարի ավագ հինգշաբթի օրը*** դարբինները կռում էին լռության պայմաններում, և որը եկեղեցում պատարագի արարողությունից դուրս գալուց հետո կրում էին վերոհիշյալ կանայք[18]:

Հղիության շրջանում զանազան գուշակություններ անելու սովորույթ ունեցել են նաև աղձնիքցիները: Օրինակ՝ հավատում էին, թե իբր ինչպիսի անձնավորության կամ կենդանու դիմաց գտնվելիս երեխան խաղար մոր արգանդում, նրա նմանությունն ու բնավորությունն էլ կունենար նորածինը[19]: Կամ՝ եթե հղի կինը սրբավայրում միամտորեն քորեր

---

[13] ԴԱՌ, գ. 1, էջ 106, գ. 2, էջ 151-152:

[14] ԴԱՌ, գ. 1, էջ 95-96: Հղի կնոջը խստիվ արգելվում էր անցնել ենջեցյալին լողացրած հոսող ջրի վրայով՝ նորածնի գեղականման չծնվելու մտավախությամբ («Բիւրակն», 1900, թիվ 21, էջ 344-346):

[15] «Բիւրակն», 1909, էջ 298-300:

[16] ԴԱՌ, գ. 2, էջ 128:

[17] Տե՛ս **Ա. Իսրայելյան,** Եկեղեցական խաչերի նախաքրիստոնեական կիրառությունը.- Հայ ժողովրդական մշակույթի հետազոտման հարցեր (Երիտ. գիտ. VI կոնֆերանսի զեկուցման թեզիսներ, Եր., 1984, էջ 35):

[18] **Ա. Թադևոսյան,** Դարբինը հայոց ծիսակարգում (պատմաազգագրական ուսումնասիրություն), պ.գ.թ. ատենախոսության սեղմագիր, Եր., 1994:

[19] ԴԱՌ, գ. 1, էջ 95:

մարմնի որևէ մասը, նույն մասում նորածին երեխան խալ կունենար[20]:

Աղձնիքահայերի ընտանեկան համայնքում առավել ցանկալի ու խրախուսելի էր արու զավակի ծնունդը: Տղա երեխա ծնվելու պարագայում, նրա անկողինը շրջապատվում էր տարեց կանանց կողմից, որոնք գործադրում էին իրենց ողջ մոգական գիտելիքները մոր և նորածնի կյանքը «չարքերից», «չար աչքերից», «դևերից», «մեզեաղեկներից» և այլնից անվնաս պահելու համար: Մանուկի օրորոցը նույնպես «զրահավորում» էին բժժանքներով, հուտութքներով, մանեկեններով: Պարբերաբար աղջիկների ծնվելն ընտանիքում դժբախտություն էր դիտվում: Միայն աղջիկներ ունեցող հարսին հաճախ էին անիծում՝ ասելով. «Ծնունդդ չորանա, էլի աղջիկ բերիր», քանզի «Աղջիկը՝ լավ ու վատ, խլղին պատ» էր համարվում: Նման պարագաներում արու զավակ ունենալու բուռն ցանկությունը հաճախ արտահայտվում էր հետևյալ խոսքերով. «Թող քոռ ճանճ էղնի, պատին կպած էղնի, թաքի տանը տղամարդ էղնի»[21]:

Երկրագնդի գրեթե բոլոր ժողովուրդներին բնորոշ է մոգական այն հավատքը, ըստ որի ծննդաբերությունը հեշտացնելու համար պետք է գործիքները (առարկաները) մասնատել: Այդ միտմամբ Աղձնիքում քանդվում էր արորը, արձակվում էին կնոջ բոլոր կապերը, բացվում էին դռներն ու պատուհանները, վերցվում ամանեղենի կափարիչները, ջարդվում ձվերը և այլն[22]: Ըստ ժողովրդական պատկերացումների, կնոջ ծննդաբերությունը դժվարացնում էին չարքերը, որոնք, լինելով անտեսանելի, վխտում էին ծննդկանի շուրջը՝ ջանալով խափանել սերնդի շարունակությունը[23]: Ուստի տատմերը կամ ծննդաբերությանը ներկա կանայք կիրառում էին ծննդկանին չարքերից սահմանազատելու զանազան սնահավատ միջոցներ՝ դռան շեմին չարահալած խաչերկաթ, դաշույն, շղթա կամ որևէ այլ մետաղե առարկա էին դնում: Երբեմն էլ ուղիղ դռան առաջ, գետնի վրա շրջան էին գծում և դրա կենտրոնում կրակ վառում[24], ծննդկանի գլխի տակ ակշաթաթ, պայտ, մկրատ էին թաքցնում կամ նրա ձեռքն էին տալիս խմորի շամփուրը, շորերի վրա ասեղ էին խրում:

Ծննդաբերությունը դյուրացնելու և չարքերին հալածելու նպատակով հղի կնոջ որովայնի վրա դնում էին թոնրի առաջին հացը[25]: Որպես չարքերը հալածելու միջոց էր դիտվում նաև ծննդկանի կողքին, ականջի տակ հրացանազարկ տալը[26]: Այս ամենը սերտորեն աղերսվում է կրակի և երկաթի պաշտամունքի հետ: Սակայն այս սովորույթը կարող էր ունենալ լիովին իրական հիմք ու նպատակ: Ընդհանրապես ժողովրդական բժշկության

---

[20] ԴԱՆ, գ. 1, էջ 91:

[21] ԴԱՆ, գ. 1, էջ 91-92: Բաղնշում չծնված երեխայի սեռը որոշելու միջոցներից մեկը համարվում էր հետևյալը. եթե պտուղը խաղում էր հղի կնոջ սրտի մոտ, սպասվում էր տղա երեխա, եթե որովայնի տակ՝ աղջիկ երեխա: Կամ՝ խաշած որոմի (մոլախոտ) հատիկը սեղմելիս, եթե միջուկը ամբողջությամբ ցայտեր, ակնկալվում էր տղա երեխա, եթե ճզմվեր՝ աղջիկ երեխա: Հղի կնոջ համար կարվող զգեստի օձիքը ձևելու պահին՝ ներս մտնողի սեռից զուշակվում էր նորածնի տղա կամ աղջիկ լինելը:

[22] **Ե. Կարապետյան,** Սասուն (ազգագրական նյութեր), Երևան, 1963, էջ 93, **Վ. Պետրոյան,** Սասնա ազգագրությունը., էջ 273, ԴԱՆ, գ. 1, էջ 101-105:

[23] ԴԱՆ, գ. 2, էջ 109:

[24] Անդ, էջ 109-110:

[25] «Բիւրակն», 1900, էջ 315, ԴԱՆ, գ. 1, էջ 103-104:

[26] ԴԱՆ, գ. 2, էջ 110: Հմմտ. **Սպ. Լիսիցյան,** Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 202:

մեջ հայտնի էր, որ որոշ ծանր հիվանդությունների, այդ թվում ծննդաբերության ժամանակ հիվանդին կամ ծննդկանին թույլ չէր տրվում քնել, այլապես ամբողջովին թուլացած օրգանիզմը կարող էր հանգեցնել արյունահոսության, երբեմն էլ՝ նույնիսկ մահվան: Հետևաբար, հրացան արձակելը կարող էր սկզբնապես ծառայած լինել ծննդկանին զգոն և սթափ պահելուն:

Ծննդկան կնոջ ամենավտանգավոր թշնամին համարվում էր *ալ* կամ *ալք* կոչված չար ոգին: Ըստ միջնադարյան ձեռագրերում տեղ գտած ախթարքների և աղձնիքահայերի հավատալիքների՝ ալք էգ չար ոգին իբր ընդունակ էր գիշերը խեղդելու քնած պատանիներին և երիտասարդներին, խեղդամահ անելու ծննդկանին, խմելու մանկան արյունը, ծծելու մանկան ուղեղը, տանելու ծննդկանի լյարդը, նվազեցնելու մոր կաթը, խավարեցնելու նրա աչքերը և այլն: Ալքն ընդունակ էր նաև իր երեխան փոխել մարդու նորածին մանկան հետ: Նա կարող էր կերպարանափոխվել և դառնալ պառավ կին, ձի, ջորի, էշ, այծ և այլն: Դեռատի հարս դառնալով, նա չոքում էր տղոցկանի վրա, որ նրան վնասի. եթե վերջինս կարողանար կծել նրա մատը, ալքն իսկույն կդառնար մարդուն հնազանդ ծառա: Այս չար ոգու դեմ գործադրված հնարներն էին՝ ծննդաբերության սկզբի մի քանի գիշերները լույսն անշեջ պահելը, տաք ջրով լի ամանները տան մեջ երկար չթողնելը[27], ծննդականի մոտ 40 օր երկաթ դնելը, նրա ջրի բաժակի մեջ ասեղ գցելը, մոր և մանկան շորերի վրա ասեղ շուլալելը, մանկան կրծքին հաց դնելը, որով կանխվում էր դևերի կողմից երեխան փոխելը[28] և այլն:

Ըստ ժողովրդական հայեցողության, եթե կինը շաբաթվա լույս չորեքշաբթի, լույս ուրբաթ, լույս կիրակի օրերին խուսափեր կենակցելուց, ապա իգական սեռի հրեշտակներ Չորեքմուտը, Ուրբթմուտը և արական սեռի հրեշտակ Կիրակմուտը ծննդաբերության ժամանակ նրան օգնության կհասնեին: Այդ պատվիրանը կատարող կանայք, ըստ այդ նույն մտայնության, տատմոր և այլ կանանց կարիքը չունեին, քանզի Կիրակմուտը չար ոգիներին արգելում էր դռնից ներս թափանցել, իսկ Չորեքմուտն ու Ուրբթմուտը զավակն ընդունում, *բալուլը* (բարուրը) կապում և դնում են ծննդկանի անկողնու մեջ ու հեռանում: Ըստ երևույթին, այս ոգիները պտղաբերության Անահիտ դիցուհու արբանյակներն էին:

Երեխայի ծնվելուց հետո տատմերը գոլ ջրով լվացումներ էր անում ու ծննդկանին պառկեցնում դարձյալ մոխրին փռած ներքնակատիպ մի փսիաթի վրա: Այնուհետև նրա որովայնը սեղմում էր ներքև, որպեսզի ընկերքն իջնի: Զգուշության համար, ընկերքից ազատված պորտալարը միանգամից վեր չբարձրացնելու միտմամբ, դրա ծայրը թելով կապում էին ծննդկանի ոտքի մատին կամ որևէ առարկայի: Ընկերքը դիտվում էր որպես մորն ու մանկանը «վնասելու» առարկա, ուստի և այն անմիջապես, մեջն ասեղ խրած, թաղում էին տան մեջ, այնպիսի մի տեղ, ուր մարդկային ոտք չէր դրվում: Երեխայի պորտը կտրում էին աթարի (քակոր) վրա: Երեխայի պորտի և ընկերքի հետ էլ կապվում էր ապագայում հասարակության մեջ նրա ունենալիք դիրքը, երջանկությունն ու առողջությունը:

---

[27] Ընդհանրապես ենթադրություն կա, որ ինչպես հայերին հայրենի ալքը, այնպես էլ նրա միջինասիական կրկնակը ծագումնաբանորեն կապվում են ջրային ոգու հետ: Տե՛ս **О. А. Сухарева,** Пережитки демонологии и шаманства у равнинных таджиков, էջ 33:

[28] ԴԼՌ, գր. 2, էջ 111: Տե՛ս նաև **Ղ. Ալիշան,** նշվ. աշխ., էջ 222:

Բաղեշում նորածին տղա երեխայի պորտը կտրելիս տատմերն ասում էր. «Հորով-մորով էնգիս, դպրոցական էնգիս, օդեն ման գալող, սպիտակ-մորուք եղնիս, հարսանիքի գլուխ կանգնող էնգիս», իսկ աղջիկ երեխայի պորտը կտրելիս՝ «ձկան խաչ էլնի գլուխդ», այսինքն՝ «բարի բախտ ունենաս», «խոնարհ և հունարով էնգիս»: Երեխայի պորտի և ընկերքի հետ էլ կապվում էր ապագայում հասարակության մեջ նրա ունենալիք դիրքը, երջանկությունն ու առողջությունը: Հավատում էին, թե նորածին մանկան պորտը եթե եկեղեցի կամ դպրոց նետեին՝ կարդացող կլիներ, շուկան՝ առևտրական, դարբնոցը՝ արհեստավոր, փողոցը՝ թափառական: Դրա համար էլ տղա երեխայի պորտը պահում էին դպրոցի, իսկ աղջիկ երեխայինը՝ դերձակի կամ ջուլհակի տան պատի մեջ:

Նորածին երեխային ցույց տրվող առաջին խնամքը նրա մարմինն աղելն էր, մի բան, որը զերծ էր պահում ամեն տեսակի վարակից: Ինչպես այլ ժողովուրդների, այնպես էլ հայերի մեջ աղը սրբություն է համարվել: Աղն ամենայն պղծության փարատիչ է. նորածին մանկան վրա աղ ցանելու սովորույթի մեջ հայերը «կնունք» և հայացում էին տեսնում: Աղով լվացվելով՝ «մաքրվում» էին ծննդաբերությանը մասնակցած կանայք[29]:

Հայտնի է նաև աղի կիրառության մեկ այլ ձև: Այն ընտանիքում, որտեղ օտար մարդկանց այցելությունից հետո նորածինը հանկարծ սկսում էր իրեն անհանգիստ պահել՝ առանց որևէ պատճառի անդադար լացել, չքնել և այլն, երեխայի տատիկը կամ մայրը ձեռքի ափում պահված մի բուռ աղով խաչակնքում էր «աչքով տված» մանկանը՝ միաժամանակ մի քանի անգամ ասելով. «Թու, թու, թու, չար աչքին չար փուշ»: Այնուհետև, այդ նույն խոսքերը կրկնելով, աղը շաղ էին տալիս վառվող կրակի վրա, որից հետո նորածինը հանգստանում էր:

Եթե նորածինը տղա էր լինում, մորը խորհուրդ էին տալիս յոթ անգամ հաշվել տանիքի գերանները, յոթ արու զավակ ունենալու ակնկալիքով: Տատմերը մանկանը լողացնում էր մինչև կնունքը: Ամեն անգամ լողացնելիս, խոսքը մորն ուղղելով, ասում էր. «Բախտավոր քառասունք էնգիք»: Ըստ որում, մորն ու մանկանը չարքերից հեռու պահելու նպատակով տաշտի մեջ ակիշ էր դրվում, և նորածնի լողացած ջրից տատմերը մի բուռ ջուր էր շաղ տալիս մոր ու մանկան վրա[30]:

Ետծննդյան փուլի ծիսակարգում հիշատակության է արժանի ևս մեկ կարևոր արարողություն՝ մանկան մկրտությունը: Երեխայի կնունքը տեղի էր ունենում ծննդյան յոթերորդ օրը լրանալուց հետո՝ ութերորդ օրը, եկեղեցում կամ տանը, տոհմական քավորի, մայրապետի, ազգականների ու այլ հանդիսականների ներկայությամբ: Երեխային եկեղեցի մկրտելու տանելիս տանողների ետևից մոր բարձի տակ պահած չարխափան գլուխ սոխեր էին շպրտում՝ ասելով. «Ա՛ռ ծանրությունդ, տուր թեթևությունդ»[31]: Ճանապարհին նորամանուկին չարքերից ազատ պահելու միտումով նաև հաց էին վերցնում, որը եկեղեցում

---

[29] Աղը նաև զոհաբերվող կենդանու փարատիչն է, զոհվելուց առաջ նա պետք է աղ վայելի: Աղի հետ կապված բազմաթիվ հավատալիքներից երևում է, որ այն Հայաստանում լոկ համեմունք չէ, որ մեծարվում է: Հայկական աղապաշտությունը, ըստ ազգագրագետ Վ. Բդոյանի, այլ ժողովուրդների աղապաշտությունից տարբերվում է աղի համար հատկացված հատուկ աղամաններով (տե՛ս **Վ. Բդոյան**, Հայկական աղամաններ, Եր., 1986, էջ 19):

[30] ԴԱՆ, տ. 1, էջ 105-106, տ. 2, էջ 113-115:

[31]

բաժանում էին աղքատներին՝ երեխայի ապագա բախտավորության ակնկալիքով: Այդ միջոցին երկաթե շամփուրից անբաժան ծննդկանը նորածնի աղջիկ լինելու դեպքում տանը գուլպա էր հյուսում, իսկ տղա լինելու դեպքում՝ գիրք էր կարդում կամ թերթում՝ նրանց ապագայում այդ շնորհքները հաղորդելու հավատքով:

Կնունքի խորհուրդն իրագործող հիմնական անձինք քահանան, քավորն ու տատմերն էին: Եկեղեցում մանկանը կնքում էին բեմի ձախ կողմում գտնվող հատուկ ավազանում, իսկ տանը՝ թոնրի կամ թվեքի շուրջը, մեռոնաջրով լցված *անգանակում*՝ (հացի փայտե տաշտ): Տանը հիմնականում մահամերձ նորածնի կնունքն էին անում: Քահանան մանկանը ավազանում մեռոնելուց հետո դնում էր քավորի թևերին, իսկ վերջինս էլ՝ հանձնում էր տատմորը՝ մանկանը բալուլելու և ետ վերադարձնելու: Տատմորից մանկանը ետ ստանալիս քավորը տալիս էր դրամական նվեր: Կնունքի ժամանակ քահանան մեռոն է դնում մանկան բերանին, աչքերին, ականջների մեջ, պորտի վրա, ոտքերի տակ, քթանցքներին: Կնունքի արարողության ավարտին նորածնի մայրը ծնկաչոք մոտենում էր քավորին, խոնարհվում նրա ոտքերի առջև, համբուրում դրանք ու բալուլը վերցնում: Պսակի քավորն էր ընտրվում կնքաքավոր[32]: Երբեմն, քավորի բացակայության դեպքում, երեխային կնքում էին ալյուրի մաղի վրա, որը փոխարինում էր քավորին, «քավորություն էր անում»[33]: Գործող ալյուրի մաղը ևս դիտվում էր որպես առատության և սրբության խորհրդանշան:

Հայկական Եկեղեցու կարգի համաձայն, ծննդկանը, նորածինը և տատմերը մաքրված ու հալալված էին համարվում երեխայի մկրտությունից հետո միայն: Այս կարգն այն աստիճան էր արմատացած ժողովրդի մեջ, որ չմկրտված նորածին երեխայի մահանալու դեպքում նրան թաղում էին ոչ թե համայնքի կամ տոհմական գերեզմանոցում, այլ դրանից յոթ քայլ հեռու: Այդպիսի ննջեցյալների համար նույնիսկ թաղման արարողություն կամ որևէ աղոթք չէր արվում, անձայն, երբեմն էլ գաղտնի էին թաղում:

Մկրտության ծեսով, փաստորեն, հասարակությունը նորածին անհատին իրավական ուժ էր տալիս, իր մեջ էր առնում աշխարհ եկած նոր անդամին:

Ետծննդյան շրջանը հայտնի է «Քառասունք» անվամբ, որը ժողովրդի դարավոր փորձի հիմամբ դիտվել է որպես ծննդկանին ու նորամանուկին իրական ու սնոտիապաշտական միջոցներով հնարավոր վտանգներից վնասազերծելու կարևոր փուլ: Պետք է կարծել, որ քառասունքը քրիստոնեական ծեսերի մեջ է մտել հեթանոսական սովորույթներից, որոնք ծագել են կնոջ առողջական վիճակը վերականգնելու իրական ու գործնական փորձից: Բացի այն, որ այդ ընթացքում վերջիններին մեկուսացնում էին և նրանց նկատմամբ հատուկ խնամք տանում, խիստ ուշադրություն էր դարձվում նաև հատուկ ծիսակարգի կատարմանը, քանի որ քառասունքն ինքնին ընկալվում էր որպես վտանգաշատ միջոց: Ողջ քառասունքի ընթացքում ծննդկանը պետք է սրբորեն պահպաներ զանազան արգելքներ: Այսպես, կտրականապես արգելվում էր կենակցելը և տնային ամենատարբեր աշխատանք կատարելը: Առանձնացվում էր տողոցկանի ամանեղենը, որոշ հավատալիքների հիմամբ արգելվում էր դուրս գալը, արևի տակ գտնվելը և այլն, բոլորն էլ ի նպաստ առող-

---

[32] ԴԱՄ, գ. 2, էջ 120, 166-167:

[33] Տե՛ս **Վ. Պետրոյան**, նշվ. աշխ., էջ 278: Հարքում երեխայի բալուլը մաղի վրա էին դնում կնունքից հետո (տե՛ս **Բենոն**, Բուլանրխ կամ Հարք գավառ, ԱՀ, գ. Ե, Թիֆլիս, 1889, էջ 127):

ջության պահպանման: Քառասունքի ընթացքում կարծեցյալ չար ուժերի հասցրած վնասը կոչվում էր «կոխ», որը ժողովուրդը համարում էր յուրօրինակ հիվանդություն[34]: Կոխի մյուս պատճառներն էին՝ չար աչքը, չբեր կամ թպղոտ կանայք, ննջեցյալները, միս տուն բերելը, քառասունքի ընթացքում մանկանը լողացրած ջուրը ոտքի տակ թափելը, ինչպես նաև՝ քառասունքը չլրացած երկու ծննդկանների փոխայցելությունը՝ *քառասունքը խառնվելը*[35]:

Այդ արգելանքներն իրականում կանխում էին ծննդկանների պատահական վարակ ստանալը: Հայտնի էին կոխն անցկացնելու մոգական միջոցները: Այսպես՝ կրում էին պահպանակներ, արտասանում զանազան աղոթքներ, խուսափում չբեր կամ թպղոտ կանից, ինչպես նաև չար աչք ունեցող մարդկանց հանդիպելուց: Եթե, այնուամենայնիվ, երեխան «կոխվում» էր, ջանում էին գաղտնաբար ձեռք բերել չար աչք ունեցող մարդկանց շորերից կտորներ ու դրանք վառել նորածնի ոտքերի մոտ[36]: Միս տուն բերելու դեպքում նորածնին լողացնում էին նրա մի կտորով: Երկու ծննդկանի քառասունքը «խառնվելու» դեպքում մայրերը փոխադարձաբար կուրծք էին տալիս մեկը մյուսի երեխային, որից հետո դարձյալ երեխաներին փոխելով՝ նստեցնում էին իրենց ծնկներին ու լողացնում, իսկ այլոց կողմից կոխ ստանալու դեպքում լողացնում էին կոխի պատճառ հանդիսացողի ոտքերի վրա[37]: Քառասունքակոխ եղած նորածին երկու մայր կամ նորապսակ երկու զույգ երբ մեկմեկու տուն հանդիպեին, պարտադիր փոխանակում էին ասեղ կամ գլխի մազ, կամ էլ քառասուն տնից մեկական բանալի էին հավաքում և դրանք դնելով *կոնքի* (տաշտի) մեջ՝ ուրբաթ օրերին երեխային լողացնում նրա մեջ:

Գյուղում ննջեցյալ լինելիս արգելվում էր լողացնել մանկանը, քանի որ այդ օրը մեռելի բաժին էր համարվում[38]: Որպեսզի երեխան մեռելակոխ չլիներ, եթե տան մոտով ննջեցյալ էին տանում, մանկանը բարձրացնում էին տեղից[39] կամ դուրս էին տանում նրա շորերը: Մեռելակոխ լինելու դեպքում երեխային շաբաթ օրերը լողացնում էին այն ննջեցյալի գերեզմանի վրա, որից նա իբր կոխ էր ստացել[40], և ապա մոմ էին վառում ու խունկ ծխում: Նորածինը երբ շատ նիհար էր լինում, կարծում էին, թե իբր *մեռե աղեկները* փոխել են մանկանը: Մայրն այդպիսի երեխային տանում էր գերեզմանատուն, մի կողմ դնելով՝ դրան էր մտնում: Որևէ անցորդ երեխայի լացի ձայնը լսելով՝ հարցնում էր. «Ա՛ս տղան որո՞ւնն է»: Մայրն անմիջապես դուրս էր գալիս պահ մտած տեղից, գրկում էր նրան իբրև իր նախկին երեխայի[41]:

Կոխի պատճառը չհայտնաբերելու դեպքում, «...յոթ տնից մեղրամոմ, յոթ բակից ցախ և յոթ աղբյուրից ջուր էին վերցնում, ցախերը վառում էին, մեղրամոմը հալում և ջուրը կանաչ ամանի մեջ լցնում, վրան մկրատ դնում ու հալած մեղրամոմը վրան թափում, կա-

---

[34] «Բիւրակն», 1898, էջ 47-48:
[35] ԴԱՆ, գր. 2, էջ 114-115:
[36] ԴԱՆ, գր. 2, էջ 132-133, 153, 180-181:
[37] ԴԱՆ, գր. 2, էջ 114-115, 152-153:
[38] ԴԱՆ, գր. 2, էջ 121:
[39] «Բիւրակն», 1889, թիվ 38-39, էջ 614, ԴԱՆ, գր. 2, էջ 137:
[40] ԴԱՆ, գր. 2, էջ 126:
[41] «Բիւրակն», 1900, թիվ 21, էջ 315:

պույտ շորով ծածկում ամանը և օրորոցի տակ դնում», իբր թե երեխան ինչից որ «կոխված» լիներ, մեղրամոմն առավոտյան այն ձևը կընդուներ: Այդ մեղրամոմը կապույտ կտորի մեջ կարում ու ճանապարհների խաչմերուկում թաղում էին, որով երեխան փրկված էր համարվում[42]: Ոմանք էլ կոխ ստացած երեխային անց էին կացնում յոթ տնից հավաքած ալյուրից թխված օղաձև հացի կամ թոնրի ակի (սնդու) միջով: Թոնրի ներսում կանգնած մեկը դիտավորյալ ետ էր քաշում մանկանը՝ ստեղծելով անցքով երեխային անցնելու արհեստական դժվարություն: Եթե երեխան անցնելու պահին լաց լիներ, փրկված էր համարվում: Գործողությունը կրկնվում էր երեք անգամ[43]: Քառասունքակոխ երեխային «բուժելու» հնարներից մեկն էլ համարվում էր յոթ շաբաթ տևողությամբ, ամեն չորեքշաբթի օրերին կշեռքով ցանի (աթարի փշրանքի) հետ կշռելը: Ըստ որում, եթե մանկան քաշը փոքրինչ ավելանար, փրկված էր համարվում:

Քառասունքից դուրս գալը նշանավորվում էր մոր ու մանկան լողացնելու ծեսով, որի ընթացքում ***քառսընքաթասով*** քառասուն անգամ ջուր էին լցնում երկուսի գլխին, որից հետո մանկանը տղոցկանի անկողնուց տեղափոխում էին օրորոց, որը ներս բերելուց առաջ մանկանը դուրս էին հանում: Ըստ որում, նախքան երեխային օրորոց դնելը, նրա տեղը կատու էին դնում, որպեսզի մանկանը վնասող չարքերն անցնեին կատվին: Այդ միտումով չար ոգիներից և չար աչքից պաշտպանելու համար մոր ու մանկան մահճակալում և կողքերին պահում էին շամփուր, դանակ, դաշույն, մկրատ, սանդերք, գլխաշորերին՝ ասեղ շուլալում: Սովորույթի համաձայն, ծննդկան կանայք ամենուրեք կրելու էին Զատկին նախորդող չարչարանաց ուրբաթ, երբեմն հինգշաբթի օրերին, որոշակի կանոնների պահպանմամբ՝ պողպատից պատրաստված շրջանաձև (մատանի, ապարանջան, վզնոց) հմայական պահպանակներ, որոնք պաշտպանելու էին քաջքերից, չար աչքից, ջադուներից և այլն: Դրանք կոչվում էին ***ուրբաթարուր*** [44]: Կնունքից հետո, մանկանը օրորոց տեղափոխելիս, մեջը ցորենի հատիկներ էին շաղ տալիս: Սովորույթի համաձայն, ցորենը որպես հատիկային պաշտամունքի խորհրդանիշ, ևս ուներ պահպանակի նշանակություն:

Նորածնի խնամքի մի մասն էր կազմում ծեսերի ու սովորույթների այն խումբը, որն առնչվում էր առաջին ատամը երևալու, առաջին անգամ եղունգներն ու մազերը կտրելու, առաջին անգամ քայլելու, ուշ խոսելը հաղթահարելու հետ:

Առաջին ատամը դուրս գալու առթիվ կատարվում էր հատուկ ծես. չամչախառն ***ատամհատիկ*** կամ ***ակռասորիկ*** կոչված ցորենի, ոսպի, սիսեռի կամ կանեփի հատիկներ էին շաղ տալիս մանկան գլխին: Ատամհատիկը բաժանում էին հարևան-բարեկամներին, իսկ վերջիններից ստանում մրգեր, քաղցրավենիք: Նմանողական մոգության սկզբունքով ակնկալում էին մանկան ատամները նույնպես մանրահատիկ դարձնել: Հավատում էին, որ ծնողներին փորձանք կսպասվեր, եթե մանկան առաջին ատամը դուրս գար վերին լնդից: Այդպիսի երեխան չարագուշակ, գլխակեր էր համարվում: Բախտավոր երեխա

---

42 «Բիւրակն», 1899, թիվ 38-39, էջ 614:

43 ԴԱՆ, պ. 2, էջ 143, 151-152:

44 ԴԱՆ, պ. 1, էջ 58: Այս հարցերի վերաբերյալ ուշագրավ հաղորդում ունի Ա. Իսրայելյանը (տե՛ս **Ա. Իսրայելյան**, Հայոց երկաթե և պողպատե հմայական պահպանակները XIX-XX դդ., զեկուցումների թեզիսներ, Եր., 1984, էջ 14-16):

դարձնելու միտմամբ՝ նրան որոշ բարձրությունից գլորում էին իր անկողնու վրա: Այդ նույն ծեսի պահին մանկան ապագա մասնագիտությունն ակնկալող գուշակություններ էլ էին անում. շուրջը փռում էին տարբեր զբաղմունքներին վերաբերող առարկաներ, գործիքներ: Երեխան դրանցից որ մեկը փորձեր վերցնել, այդ արհեստին էլ իբրև թե տիրանալու էր:

Երբ ընկնում էր մանկան *կաթնատամը*, այն պահում էին դռան *ծխանի* մեջ՝ ասելով. «Ա՛ռ շան ատամը, տո՛ւր գառի ատամը»[45], կամ՝ «ա՛ռ քեզ երկաթի ակռա, տո՛ւր ինձ ոսկի ակռա»:

Հավատացած լինելով, որ Ս. Սարգիսն իր ձիու պոչը խուզում էր Առաջավորաց պասի չորեքշաբթի օրը, այդ նույն օրն էլ առաջին անգամ խուզում էին մանկան մազերը: Արգելվում էր կտրված մազերը թափել գետնին, որպեսզի տերը գլխացավ չունենար[46]: Այն ծնողները, որոնց երեխաները չէին ապրում, մանկանը մնացական դարձնելու հույսով մազերը չէին խուզում մինչև յոթ տարեկան դառնալը: Կտրելու օրը մատաղ էին անում այն սրբավայրում, որի անունով խոստացել էին զոհ մատուցել: Կտրված մազերը թաքցնում էին նույն սրբատեղի պատի մեջ[47]:

Հավատում էին, թե իբր մանկանն անդրաշխարհում տեղով կապահովեին, եթե առաջին անգամ կտրված եղունգները հորեին գետնի մեջ[48]:

Ուշ ոտքի ելնող մանկանը դնում էին մաղի վրա և յոթ տնից լոելյայն հաց էին խնդրում և կերցնում երեխային կամ էլ տանում էին որևէ սրբատեղ, որտեղ մի գերեզմանի շուրջը գարի էին շաղ տալիս և ապա ցանած տեղն ավլելով, երեխային պտտեցնում էին ավլած տեղը, կամ էլ՝ *չաչ* քայլելու միտմամբ շորով փաթաթած սխտոր էին կապում երեխայի վզից[49]:

Ուշ խոսող երեխայի բերանը «բացում» էին եկեղեցու խաչը կամ բանալին բերանի մեջ պտտելով կամ մաղի վրա դրված երեխային տանում էին տնից տուն՝ հաց խնդրելով և նրան ուտեցնելով[50]: Առաջին նորածին երեխայի խուլ և համր լինելը կանխելու միտմամբ էր, որ դեռևս առագաստի՝ *մեղրալուսին* համարվող գիշերը Սղերդում տան անդամներից մեկը գաղտնի ականջ էր դնելու հարս ու փեսայի խոսակցությանը[51]:

Մանկան պաշտպանության և խնամքի մեջ էր մտնում հուռութներով ապահովելը: Քառասունքը լրանալուց հետո նրան տեղափոխում էին օրորոցի մեջ: Չար աչքից հեռու պահելու միտումով օրորոցի կամարից կախում էին բազմապիսի խաղալիք-հուռութներ, պահպանակներ՝ *չարոց ուլինք* կամ *աչքաուլինք*, որոնցից մեկի տեսակը Բաղեշում սարքում էին *կերթե* (սարի) ծամոնից և ոսկե բարակ, կոճականման թիթեղից: Մեկ այլ տեսակ էլ լինում էր սև սաթից՝ *սիլան*, կարմիր սաթից՝ *մրջան* ուլինք[52]: Կախում էին նաև պղնձե զան-

---

[45] ԴԱՆ, գր. 2, էջ 171: Խիան գավառում մանկան ատամները մանր, գեղեցիկ ու հաստատուն լինելու միտմամբ՝ ընկած առաջին ատամը մայրը դռան ծխանի տակ էր դնում՝ երեք անգամ ասելով. «Մանկդ-մանկդ գնց (նման՝ Ռ. Ն.) գառան, ամպուր-ամպուր գնց ջորուն («Բիւրակն», 1898, թիվ 20, էջ 396-397):

[46] «Բիւրակն», 1899, թիվ 38-39, էջ 614-615:

[47] «Մասիս», 1885, № 3773:

[48] «Բիւրակն», 1900, թիվ 17, էջ 262:

[49] ԴԱՆ, գր. 2, էջ 128-129:

[50] ԴԱՆ, գր. 2, էջ 171:

[51] «Բիւրակն», 1899, թիվ 29, էջ 456, ԴԱՆ, գր. 2, էջ 132-133, 146, 180:

[52] ԴԱՆ, գր. 2, էջ132-133, 146:

գուլակ և ոչխարի շուրջ 40 ճան: Մանկան բարձի տակ պահում էին *օձի շապիկ, ձկան ականջ, ձկան խաչաձև ոսկոր* և *պայտ:* Աղջիկ երեխայի դեպքում օրորոցից կախում էին նաև իգական սեռին բնորոշ կտեիսաձև (իգանդամաձև) *ծմրուկ* (խխունջի պատյան), տղա երեխայի դեպքում՝ արական սեռին բնորոշ ֆալլոսաձև *ծմրուկ:*

Հուռութների կարգին էին դասվում նաև մանուկների հագուստներին կարվող պահպանակները՝ կապույտ ուլունքը, կիսալուսնաձև արծաթե կամ ոսկե *նորը* (նորալուսնաձև): Աղջիկ երեխայի հագուստի վրա կարվում էր նաև գայլի չորացած ամոթացքը, հավատալով, թե այն կբախտավորեցներ կրողին[53]: Մորն ու մանկանը *չարքերից* հեռու պահելու միտմամբ սև այծի մազից պարան էին հյուսում և եկեղեցում պատարագի ժամանակ օրհնել տալուց հետո կապում նրանց մահճակալի, այնուհետև՝ օրորոցի շուրջբոլորը: Մանկանն առանձին թողնելիս տանը, թե դաշտում բարուրի կրծքին հաց (կամ նշխարք հաց) էին դնում՝ երկյուղելով, թե իբր «մեզմե աղեկներ» կոչվող չար ոգիները ընդունակ էին այն փոխել իրենց տգեղ զավակով[54]:

Նորամանուկին չարքերից հեռու պահելու և մնացական դարձնելու նպատակով դիմում էին մոգական միջոցների օգնությանը: Քահանան սև հավի արյունով ու փետուրով զինված Ավետարան էր կարդում և երեք տեղով «գիր ու թուղթ» անում մատաղ արված ոչխարի ոսկորների կտորների վրա՝ այն կոչելով *չարքոց թուղթ:* Վերջինիս մեկ օրինակը մեղրամոմով պատած կապույտ թղթի և կապույտ կտորի մեջ եռանկյունաձև հմայիլ անում, թաղում էին տան շեմի տակ, երկրորդը՝ կնոջ ծննդաբերած տեղում, երրորդը պահում էին մանկան բարձի տակ: Հետագա տարիներին արված չարքոց թուղթն ամրացնում էին մանկան հագուստի վրա՝ աջ թևին կամ պահում բարձի տակ՝ մինչև նրա յոթ տարին լրանալը:

Այդ նույն նպատակով մատաղի մանրացրած ոսկորի փոշին շաղ էին տալիս կրակի վրա և մանկան դեմքը պահում նրա ծխին[55], կա՛մ մանկան մայրը յոթ տնից տարբեր գույնի կտոր էր խնդրում, տանում Ս. Պատարագին, ապա երեխայի համար շապիկ կարում և հագցնում յոթ տարի շարունակ[56], կա՛մ Ս. Կարապետի և այլ սրբերի անուններով մատաղ էին խոստանում և զոհաբերության ժամանակ յոթ տարի «ծում ու պաս» պահում, կա՛մ էլ՝ նույն սրբավայրում մանկանն անց էին կացնում երկու խաչքարի միջով[57]:

Չար աչքից պաշտպանելու և ակնահարվածին բուժելու նպատակով հացն ու ասեղն աղոթում էին և հացը տալիս շանը, իսկ ասեղը՝ շուլալում *աչք առած* մանկան շորի վրա: Եվ ումից որ կասկածվում էր չար աչք առնելը, ձգտում էին ծածուկ ձեռք բերել նրա շորերից մեկը և այրել մանկան ոտքերի տակ[58]: Չարքերից վախեցած լինելու դեպքում, դրա պատճառը գուշակում էին ամանով ջրի երեսին պահած ակշաթաթի վրա մոմ թափելով, ուր մոմը կազմում էր բարակ շերտ, որի մակերեսին իբր թե ձևավորվում էր վախ պատճա-

---

[53] ԴԱՄ, գր. 2, էջ164, 186:
[54] ԴԱՄ, գր. 2, էջ 149-150, 155:
[55] ԴԱՄ, գր. 2, էջ 158:
[56] ԴԱՄ, գր. 2, էջ 186:
[57] ԴԱՄ, գր. 2, էջ 167:
[58] ԴԱՄ, գր. 2, էջ 137:

ող էակը, որպիսին «հայտնաբերելուց» հետո մանուկը բուժվում էր արբերին զոհ մատուցելով[59]: Չար աչք առած մանկանը բուժելու նպատակով գլխավերևում պահում էին ջրով լի աման, որի մեջ գցում էին այրվող փայտի կտորներ և այդ ջրից էլ խմեցնում նրան:

Երեխայի վայր ընկած տեղը սեպ էին գամում, որպեսզի չարքը գամվեր տեղում և մանուկն անփորձանք մնար[60]: Համաձայն ընդունված հավատալիքի, լուսինը, իրեն պատշաճ հարգանք չցուցաբերող մայրերի գրկանոց երեխաներին վնաս էր հասցնում, որը հայտնի էր *նոր առնել* կամ *նորոց լինել* ձևերով: Այդպիսի մանկանը բուժելու միտումով մայրը բարուրը տանում էր հարևանի տուն՝ տան առաջնեկ տղայի ձեռքով մանկան ճակատին, այտերին և կրծքին ու ձեռքերին կաթսայի մրով խաչեր անելու: Նույնը կատարում էին նաև Տյառնընդառաջի կրակի մոխրով[61]:

Այսպես, ուրեմն, այն ամբողջ ժամանակամիջոցը, որ ներառում էր կնոջ հղիությունը, բուն տղաբերքն ու դրան հաջորդող ավանդական քառասունքը և մանկության ողջ տևողությունը, ուղեկցվում էր բազմատեսակ սնոտի արարողություններով, նախապաշարմունքներով ու կրոնական արգելքներով, զանազան մոգական բնույթի հնարներով, որոնք հետապնդում էին մի հիմնական նպատակ՝ ամեն կերպ պահպանել հղի կնոջ, ծննդկանի ու նորածնի առողջությունը:

Հայ ընտանիքի ամենակարևոր հարցերից մեկը ամուսնությունն ու սերնդի վերարտադրությունն էր, ամլության վերացումը, հղիության պահպանումը, երեխաների անխաթար աճը: Ուշագրավ է հղիության պահպանման, դյուրին ծննդաբերության և մանկան առողջությանն ուղղված հավատալիքների շարքը, որն Աղձնիքում դրսևորվում էր ինքնատիպ երանգներով ու ավանդականությամբ: Հարսանեկան և ետհարսանեկան ծեսերի առանձին փուլերի դիտարկմամբ հանգում ենք այն եզրակացությանը, որ դրանք, ըստ առաջացման աղբյուրների, կապված են նախնական հավատալիքների, բարի ու չար ոգիների, սովորութային, կանոնաիրավական չափանիշների և բարոյական պատկերացումների հետ: Սկսած նախնական ծեսերից մինչև եկեղեցական կամ թոնրի պսակն ու հարսանիքը, ապա ետհարսանեկան արարողությունները ուղեկցվում էին ժողովրդական հավատալիքների մի կուռ ցանցով, որը, անշուշտ, միտված էր նոր ընտանիք կազմելուն, սերընդաճը ապահովելուն:

---

[59] ԴԱՌ, գ. 2, էջ 127:
[60] «Բիրակն», 1900, թիվ 21, էջ 315:
[61] ԴԱՌ, գ. 2, էջ 148: